ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1521

31.03.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի մարտի 27-ին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արարատի ՁՊՎ, որի ընթացքում արձանագրվել են թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՏՊ № 1401
02 04 15

ՄՏՊ № 2053
02 04 15թ.

1. Քննչական սենյակը ընդհանուր գտնվում էր փոշոտ վիճակում և առկա էր շատ բարձր խոնավություն, որից վնասվել էր ամբողջ քննչական սենյակի պատերը: / *կից ներկայացվում է լուսանկարներ -10,11/*
2. ՁՊՎ-ն գտնվում էր կեղտոտ, փոշոտ վիճակում:
3. Բուժսենյակի լվացարանը, սպիտակեղենը և սրբիչը կեղտոտ էին և օգտագործված էին: / *կից ներկայացվում է լուսանկարներ -5,6,7,8/*
4. Զուգարանակոնքի ջրամատակարարման համակարգը չէր աշխատում և օդափոխության կարիք էր զգացվում:
5. Լոգարանում օդափոխության կարիք էր զգացվում, իսկ ցնցուղը չէր աշխատում:
6. ՁՊՎ-ի խցերի պատուհանները բացվում են ասդիճանի օգնությամբ, բայց Դիտորդական խմբի այցելության պահին ՁՊՎ-ում ասդիճան չկար, և միանշանակ կարող ենք համոզված պնդել, որ խցերի օդափոխությունը պատուհանների միջոցով չի իրականացվում:

ՀՀ ք.Երևան 0009, Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Խախտումներ՝

1. ՀՊՎ-ի գրանցամատյանները լրացվում են ամբողջությամբ ջնջումներով, որն ըստ Դիտորդական խմբի ոչ թե անփույթ աշխատանքի արդյունք է, այլ որոշ իրավախախտումներ թաքցնելու հետևանք է:
2. Արթուր Ռուբենի Շահվերդյանը, որպես հետախուզվող, ՀՊՎ էր ընդունվել 05.02.2015թ-ին ժամը 07.20-ին և ազատ էր արձակվել 06.02.2015թ-ին ժամը 17.20-ին: Արդյունքում՝ նշված անձը առանց բավարար հիմքի ընդունվել և պահվել էր ՀՊՎ-ում: Ըստ հերթապահ մասի պետի՝ նրա համար Ա. Շահվերդյանին ՀՊՎ ընդունելու հիմք էր հանդիսել 14.03.2014թ-ին քննիչ՝ Ա. Սաֆարյանի հետախուզում հայտարարելու մասին որոշումը և Արարատի և Վայոց Ձորի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ Գ. Սարգսյանի կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը:
   Արդյունքում՝ Ա. Շահվերդյանը 34 ժամ ապօրինի պահվել է ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արարատի ՀՊՎ-ում: / *կից ներկայացվում է լուսանկարներ -1,2,3/*
3. Ըստ <<Ձերբակալված անձանց խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի 9-րդ համարի տակ գրանցված է Ռաֆիկ Էդուարդի Միլիտոնյանը: Նա խցից դուրս է բերվել քննչական գործողություններ կատարելու նպատակով՝ 11.02.2015թ-ին ժամը 22.17-ին, այնուհետև տեղափոխվել է խուց հաջորդ օրը՝ ժամը 01.55-ին, օրվա փոփոխության մասին ոչ մի գրառում չկա: / *կից ներկայացվում է լուսանկար -4/*
4. <<Ձերբակալված անձանց խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում ընդհանրապես գրառումներ չի կատարվում այն անձանց վերաբերյալ, ում խցից դուրս են բերել բուժօգնություն ցուցաբերելու նպատակով, որի արդյունքում հնարավոր չէ պարզել, թե անձանց ինչ ժամանակահատվածում են բուժօգնություն ցուցաբերել:

Այսպիսով, խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009, Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-1441 << 06 >> 05 2015թ.

Ձեր 31.03.2015թ. թիվ 2621/1521 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ տիկին Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2015թ. մարտի 27-ին ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արարատի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Արարատի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

Նշված բոլոր թերություններն արդեն իսկ վերացվել են, իսկ քննչական սենյակի պատերը վերանորոգելու նպատակով 18.04.2015թ. ոստիկանության Արարատի բաժնի ղեկավարությունը գրություն է ուղարկել ՀՀ ոստիկանության տնտեսական վարչություն: Քանի որ նշված հարցին լուծում տալու համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, այն ներկայումս գտնվում է ուսումնասիրման և քննարկման փուլում:

Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ի խցերի պատուհանները բացելու համար աստիճան չլինելուն, ապա այն առկա է, սակայն անվտանգության նկատառումներից ելնելով պահվում է ՁՊՎ-ի ռեժիմային գոտուց դուրս և խցերի օդափոխությունը պատշաճ ձևով իրականացվում է:

Խախտումներ.

ՁՊՎ-ի գրանցամատյաններում առկա են ջնջումներով կատարված ընդհամենը երկու գրառում, որոնք արվել են ոչ թե միտումնավոր, այլ տեխնիկական վրիպման արդյունքում, սակայն գրանցամատյաններում առկա ջնջումների, ինչպես նաև 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում նշված խախտումները թույլ տալու համար ոստիկանության Արարատի բաժնի հերթապահ մասի պետը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (հայտարարվել է նկատողություն), իսկ ՔՀԲ օպեր լիազորը, տեսուչ-հերթապահը և ՁՊՎ-ի ոստիկանը խիստ նախազգուշացվել են:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ